

# ՀՖՖ ԵՐԵԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## Տեղեկատվական թերթիկ բռնության և վնասի մասին

### Բռնության և վնասի սահմանումները: Նշանների և հուշումների հայտնաբերումը

Ֆուտբոլով զբաղվելը մեծապես դրական ազդեցություն է ունենում երեխաների վրա: Այնուամենայնիվ, ֆուտբոլում, ինչպես և ցանկացած այլ սպորտաձևում, երեխաները կարող են ենթարկվել բռնության, նրանց կարող են վնաս հասցնել՝ անկախ իրենց տարիքից, սեռից, ռասայից, մշակութային և կրոնական պատկանելությունից, կարողություններից կամ սեռական կողմնորոշումից:

Չնայած այն հանգամանքին, որ ֆուտբոլում երեխաների հանդեպ բռնություն գործադրելու մասին մամուլում տեղ գտած սկանդալները վերաբերում են սեռական բռնությանը, անհրաժեշտ է գիտակցել, որ սա բռնության միակ տեսակը չէ, որին երեխաները կարող են ենթարկվել:

Սույն տեղեկատվական թերթիկը ներկայացնում է բռնության տարբեր տեսակներ և օրինակներ, թե ինչպես կարելի է ճանաչել բռնությունը ֆուտբոլային միջավայրում: Այս թերթիկում նշված են մի շարք նշաններ, որոնք կարող են վկայել այն մասին, որ երեխան ենթարկվում է բռնության:

**Հիշեցում:** Ցանկացած երկիր ունի երեխաների բռնությանը վերաբերող իր օրենքները՝ ներառյալ բռնության սահմանումները: Այս տեղեկատվական թերթիկում ներառված բռնության տեսակները միջազգայնորեն ճանաչված են և ներկայացված են որպես ընդհանուր ուղեցույց:

Արտասահմանում տեղի ունեցող մրցաշարերի և խաղերի առումով անհրաժեշտ է ստուգել երեխաների բռնությանը վերաբերյալ տեղական օրենքները, քանի որ երեխաների պաշտպանությանը վերաբերող ցանկացած գործողություն պետք է լինի իրավաչափ այն երկրում, որտեղ կիրառվում է:

## Բռնության տեսակները

Գոյություն ունի երեխաների հանդեպ բռնության գործադրման 4 հիմնական տեսակ:

### Ֆիզիկական բռնություն

Ֆիզիկական բռնությունը հաճախ ամենահեշտ ճանաչվող բռնության տեսակն է: Ֆիզիկական բռնություն է համարվում (բայց չի սահմանափակվում) ցանկացած տեսակի հարվածների, ցնցումների, այրելու, ճնշումների, կծելու, խեղդելու, նետելու, ծեծելու հետ կապված կամ այլ գործողությունը, որը հետքեր է թողնում մարմնի վրա, ֆիզիկական վնաս կամ ցավ է պատճառում:

### **Ֆուտբոլում հանդիպող օրինակներ՝**

- երեխային ապտակելը՝ պատճառաբանելով, որ վերջինս պրովոկացիաներ է անում, չի լսում կամ խանգարում է մարզմանը
- վնասվածք ունեցող երեխային խաղալ ստիպելը
- երեխաներին կանխամտածված ագրեսիվ խաղի մղելը՝ առանց հաշվի առնելու երեխաներին կամ ուրիշներին վնասվածք հասցնելու ռիսկը

### **Սեռական բռնություն**

Սեռական բռնությունը ցանկացած տեսակի սեռական հարաբերություն է մեծահասակի և 18 տարեկանից ցածր տարիք ունեցող երեխայի միջև, էապես մեծ տարիք ունեցող պատանիի և ավելի փոքր տարիք ունեցող երեխայի միջև, կամ երբ մեկ անձը ճնշում է գործադրում մյուսի վրա՝ անկախ տարիքից: Բռնություն է համարվում նաև երեխաների անպարկեշտ լուսանկարներ անելը, երեխաներին սեռական պատկերների կամ գործողությունների դիտման մեջ ներգրավելը, կամ երեխաների ոչ պատշաճ սեռական վարքագծի խրախուսումը: Անցանկալի մեկնաբանություններ, մասնավորապես՝ սեռական բնույթի մեկնաբանություններ անելը, ևս համարվում է սեռական բռնության տեսակ, որին հաճախ անվանում են սեռական ոտնձգություն: Սեռական բռնություն է նաև, երբ 18 տարեկանը չլրացած անձը համաձայնություն է տալիս ունենալ սեռական հարաբերություն:

### **Ֆուտբոլում հանդիպող օրինակներ՝**

- երեխաներին մերկ լուսանկարելը, քանի դեռ նրանք ցնցուղ են ընդունում
- սեռական հարաբերության մեջ մտնելը ֆուտբոլիստի/ ֆուտբոլիստուհու հետ
- մեկնաբանություն անելը, թե ֆուտբոլիստուհին ֆիզիկապես ինչ «լավ է զարգացած»
- երեխայից աննորմալ ֆիզիկական շփում պահանջելը՝ նշելով, որ դա անհրաժեշտ է ֆուտբոլիստի/ ֆուտբոլիստուհու բարեկեցության համար

### **Հուզական, հոգեբանական բռնություն**

Հուզական բռնություն է համարվում, երբ երեխայի կյանքում նշանակալից դեր ունեցող մեծահասակը մշտապես քննադատում է, սպառնում կամ վանում է երեխային, որի հետևանքով վնասվում են վերջինիս ինքնագնահատականն ու ինքնավստահությունը:

Անձի վերաբերյալ անընդհատ կատակելը նույնպես կարող է վիրավորական լինել:

Սա, իհարկե, չի նշանակում, որ երեխաներին պետք է չքննադատել կամ նրանց հետ կատակներ չանել: Քննադատությունը կարևոր տարր է, օգնում է երեխաներին սովորել և բարելավել իրենց արդյունքները: Նմանապես, կատակներն ու ծիծաղն օգնում են կապ հաստատել մարդկանց հետ և նպաստում են թիմային ոգու ձևավորմանը:

Այնուամենայնիվ, տարբերությունն այն է, որ հուզական բռնությունը շատ հեռուն է գնում: Քննադատությունը դադարում է ոգևորիչ լինել, կատակներն էլ՝ ծիծաղելի: Հուզական

բռնությունը ևս կարող է խորապես վիրավորել և վնաս հասցնել, ինչպես ֆիզիկական բռնությունը:

### **Ֆուտբոլում հանդիպող օրինակներ՝**

- երեխայի վրա գոռալը և շարունակաբար անհաջողակ անվանելը խաղի ժամանակ լավ հանդես չգալու կամ 11-մետրանոց հարված բաց թողնելու համար
- երեխայի վրա անընդհատ ծիծաղելը և մնացած երեխաներին համանման գործողությունների դրդելը, եթե երեխան ֆիզիկապես պատրաստ չէ
- թիմում ոմանց հանդեպ ավելի շատ բարեհաճություն ցուցաբերելը (ֆավորիտ/սիրելի երեխա), որպեսզի մնացած երեխաներն իրենց մերժված զգան

### **Անտեսում**

Անտեսումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մեծահասակը բավարար հուզական աջակցություն չի ցուցաբերում կամ կանխամտածված և հետեւողականորեն շատ քիչ ուշադրություն է դարձնում կամ առհասարակ ուշադրություն չի դարձնում երեխային:

Անտեսում է նաև, երբ երեխային չի տրվում համապատասխան սնունդ, բնակարան, հագուստ, բժշկական օգնություն կամ հսկողություն: Կան բռնության այլ տեսակներ ևս, ինչպիսիք են խտրականությունը, շահագործումը և ուժի կիրառումը, բայց դրանք ընկնում են չարաշահման շրջա հիմնական կատեգորիաների տակ:

### **Ֆուտբոլում հանդիպող օրինակներ՝**

- տեղյակ չլինել, թե որտեղ են երեխաները ամառային ֆուտբոլային ճամբարների կամ արտագնա ուղևորությունների ժամանակ
- տաք եղանակին մարզման ընթացքում երեխաներին ջուր չտրամադրելը կամ ջրային դադար չտալը
- անապահով և ճանապարհային երթևեկության համար ոչ պիտանի տրանսպորտային միջոցի օգտագործումը երեխաներին խաղերին տանելու համար:

### **Բուլինգ**

Չնայած այն հանգամանքին, որ բռնությունը տեսականորեն համարվում է մեծահասակի կողմից երեխայի հանդեպ գործադրվող երևույթ, այնուամենայնիվ, հասակակիցները ևս կարող են բռնություն գործադրել: Երեխայի կողմից մեկ այլ երեխայի հանդեպ բռնության գործադրումը կոչվում է «բուլինգ»:

Բուլինգը սահմանվում է որպես ագրեսիայի պարբերաբար դրսևորում որևէ սոցիալական խմբի կողմից տվյալ խմբի որևէ անդամի կամ անդամների նկատմամբ, այդ թվում՝ բանավոր սպառնալիքները, ծաղրելը, ֆիզիկական հարձակումները՝ հրելը, ծեծելը և այլն, դիտավորյալ հեռացնելը անձին որևէ խմբից և այլն:

Բուլինգը կարող է կիրառվել տարբեր ձևերով: Առանձնացվում են ֆիզիկական, հոգեբանական, կիբերբուլինգ կամ համացանցային բուլինգ: Բուլինգը կարող է ներառել ֆիզիկական գործողություններ, ինչպիսիք են՝ հարվածելը, առցանց գործունեություն, ինչպիսիք են՝ սոցիալական ցանցերում տեղադրված վիրավորական հաղորդագրությունները, մեկնաբանությունները կամ նկարները, գույքի վնաս կամ գողություն և անվանարկում: Բուլինգը կարող է հիմնված լինել անձի սեռի, էթնիկական պատկանելության, սեռականության, հաշմանդամության կամ մարզական կարողության վրա:

Մեծահասակները երբեմն փորձում են նվազագույնի հասցնել բուլինգը՝ կարծելով, որ այն լուրջ վտանգ չի ներկայացնում, քանի որ տեղի է ունենում երեխաների միջև: Այնուամենայնիվ, բուլինգը կարող է պատճառել և պատճառում է վնաս: Այն նաև հակված է աստիճանաբար վատթարանալուն: Այդ պատճառով կարևոր է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ բոլորը կգիտակցեն, որ բուլինգը անհանդուրժելի երևույթ է և սկսվելուն պես կդադարեցնեն այն:

**Բռնության նշանների և հուշումների հայտնաբերումը**

Բռնության հայտնաբերումը միշտ չէ, որ հեշտ է: Ժամանակ առ ժամանակ բռնությունը բացահայտվում է կամ դրա վերաբերյալ վկայություն է տրվում, այսինքն երեխան կամ մեկ այլ երեխա/մեծահասակ այդ մասին հաղորդում է: Ավելի հաճախ հանդիպում են հուշումներ/նշաններ, որ մի բան այն չէ: Սա, իհարկե, միանշանակ չի մատնանշում, որ մի բան սխալ է, բայց սրանք նշաններ են, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնել:

Բնորոշ նշաններն են՝

Երբ երեխաները	Երբ մեծահասակները՝ ակումբի անձնակազմը կամ ծնողները
<ul style="list-style-type: none"> <li>✓ ունեն անհասկանալի ֆիզիկական վնասվածքներ, ներառյալ կապտուկներն ու վերքերը, ինչպիսիք են՝ ծխախոտից այրվածքները կամ ինքնավնասման նշաններ՝ կտրվածքներից սպիներ կամ քայլելիս ցավ</li> <li>✓ ունեն անհասկանալի/մշտական հիվանդություններ, օրինակ՝ ստամոքսի խանգարումներ, ուտելու հետ կապված դժվարություններ</li> <li>✓ դրսևորում են վարքագծի կամ տրամադրության հանկարծակի փոփոխություն, օրինակ՝ դառնում են ավելի ագրեսիվ, խուսափող կամ ամաչկոտ/վախկոտ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ կարծես առանձնացնում են մեկ կամ մի քանի երեխաների և հատուկ վերաբերմունք են ցույց տալիս նրանց հանդեպ, համարում են նրանց ֆավորիտներ/ սիրելիներ կամ դա անում են մյուսներին պատժելու համար</li> <li>✓ ավելի շատ մտածում են արդյունքի մասին, քան արդյոք երեխան երջանիկ է կամ հաճույք ստանում է խաղից</li> <li>✓ բացասական կամ քննադատական վերաբերմունք են ցույց տալիս երեխայի հանդեպ</li> <li>✓ ոչ պատշաճ կերպով են արտահայտվում երեխաների մասին, օրինակ՝ սեռական տեսանկյունից քննարկում են աղջիկների տեսքն ու ֆիզիկական կառուցվածքը</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>✓ <b>դառնում են շատ գաղտնապահ,</b> օրինակ՝ դադարում են պատմել՝ ինչ է կատարվում իրենց կյանքում կամ հանկարծակի դադարում են խոսել, երբ ներս են մտնում մեծահասակները</li> <li>✓ մշտապես <b>արժեզրկում են իրենց,</b> օրինակ՝ ասում են, որ իրենք արժեք չունեն կամ օգուտ չեն բերում</li> <li>✓ իրենց պահում են <b>մեկուսացված,</b> թիմում մյուսների հետ չեն շփվում</li> <li>✓ <b>ինքնասպանության փորձ են անում</b></li> <li>✓ ասում են, որ իրենք կամ իրենց թիմակիցները բռնության են ենթարկվում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ <b>չեն հարգում</b> երեխաների անձնական տիրույթը, օրինակ՝ հանդերձարաններում</li> <li>✓ <b>չեն անհանգստանում</b> երեխաների մասին՝ ինչ են նրանք անում կամ որտեղ են</li> <li>✓ <b>չեն հետևում</b> ուղեցույցերին կամ վարքագծի կանոններին</li> <li>✓ ասում են, որ նրանք տեսել են, թե ինչպես է երեխան բռնության ենթարկվում կամ մտահոգված են որևէ իրավիճակով</li> </ul>
---	---